Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (Գիտաժողովի նյութեր), *«Նախիջևան» հրատ., Երևան, 2001, 202 էջ:*

Պատմական Հայաստանի Նախիջևան գավառը աշխարհագրական իր դիրքով Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում ունեցել է բացառիկ կարևոր նշանակություն՝ կապելով Արարատյան գաշտը Իրանի ու Արևելքի այլ երկրների հետ և վճռորոշ դեր է խաղացել Հայաստանի պատմության ողջ ընթացքում ինչպես անկախ պետականության պայմաններում, այնպես էլ օտար տիրապետության ներքո լինելու պարագայում:

Հայագիտության մեջ Նախիջևանի պատմության առանձին խնդիրների լուսաբանմանը թեև նվիրվել են ոչ քիչ ուսումնասիրություններ, սակայն առ այսօր գոյություն չունի Նախիջևանի երկրամասի պատմության ամբողջական շարադրանք: Ադրբեջանական պատմագիտության մեջ եղած մենագրությունները[1] տառապում են ծայրահեղ միակողմանիությամբ և չեն կարող հավակնել ամփոփ ուսումնասիրություն լինելու մակարդակին: Նախիջևանի տարածաշրջանի մասին հայոց պատմության ընդհանուր շարադրանքի մեջ խոսվում է առանց մասնավորելու այն որպես ինքնուրույն և իր ներքին կյանքով ապրող երկրամաս: Հայագիտության մեջ Նախիջևանի պատմությանը նվիրված ամփոփ ուսումնասիրության բացակայության պատճառով ընթերցող լայն շրջանների համար ստվերում է մնացել նրա խոշոր ռազմավարական դերի ու նշանակության գիտակցումը, նրա համար պայքարի պատմության լուսաբանման անհրաժեշտությունը:

Նման ուսումնասիրության անհրաժեշտությունը ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական այժմեականություն և հրատապություն: Նախիջևանի պատմության իրական ընթացքի մասին գիտական լիարժեք և ճշգրիտ պատկերացումը անհրաժեշտ է նաև քաղաքական ժամանակակից շահարկումներին դիմակայելու գործում:

Վերջին երկու դարերի ընթացքում Նախիջևանի ռազմավարական գերը առավել կարևորվեց, իսկ նրա պատմությունը դարձավ սկզբնաղբյուրներով առավել հարուստ ու հագեցած ժամանակաշրջան: Նախիջևանը այն հիմնական ուղիներից մեկն էր, որին տիրելով կարելի էր վերահսկողություն սահմանել ոչ միայն այնտեղով անցնող Արևելք-Արևմուտք առևտրական ուղու վրա, այլև հնարավորություն էր ստեղծվում մշտապես սպառնալիքի տակ պահելու Արարատյան դաշտը, Սյունիքը և Հայաստանի կենտրոնական ու հարավային նահանգները: Այդ նկատառումով օտար նվաճողները ջանք չեն խնայել այն իրենց տիրապետության ներքո պահելու համար: Նախիջևանի ռազմավարական նման դիրքը թելադրում էր այնտեղ հատուկ քաղաքականության իրականացում: Այսպիսով, Նախիջևանը կարևորվում էր ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ ռազմավարական նկատառումներով: Դրանով էր թելադրված ինչպես հայ բնակչության ու բնակավայրերի հաստատուն և բարգավաճ գոյատևումը (Ջուղա, Ագուլիս և այլն) հայկական մշակութային բազում հուշարձաններով՝, այլև քոչվորների միջև մշտական ու անընդմեջ պայքարը տեղի վարչական կառավարումը վերահսկողության տակ ունենալու նպատակով: Այդ պայքարի ընթացքն ու պատմությունը իր արտացոլումն է գտել ինչպես հայկական, այնպես էլ պարսկալեզու սկզբնաղբյուրների ու վավերագրերի մեջ: Նախիջևանին տիրելու պայքարի պատմության ժամանակագրական առումով մի կարճ գրվագի ներկայացումն ու լուսաբանումը կազմում է գրախոսվող ժողովածուի մեջ ընդգրկված հոդ-

---

1 Рауф Маммадов. Нахчыван шаһаринин тарихи очерки (орта асрлар довру). Бакы, "Елм", 1977.

2 Արգամ Այվազյան. Ագուլիս (պատմամշակութային հուշարձաններ). Երևան, 1984: Նույնի՝ Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները. Երևան, 1987:

վածների առանցքը: Վերջին տարիներին քաղաքական տեղաշարժերի արդյունքում Նախիջևանի խնդիրը ոչ միայն կրկին ձեռք է բերել հույժ այժմեականություն, այլև հնարավորություն է ստեղծվել անկաշկանդ ուսումնասիրելու նրա պատմության բազմակնճիռ դրվագները:

Ուսումնասիրման կարոտ հարցերի մեջ առավել կարևորվում են 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի կնքման հետ կապված խնդիրները, որով հայ ժողովրդի ու նրա վերականգնված պետականության թիկունքում դավադիր համաձայնությամբ Նախիջևանի երկրամասը կտրվեց Հայաստանից և որպես առանձին վարչատարածքային միավոր դրվեց նորաստեղծ մեկ այլ պետության իրավասության, այն է՝ պրոտեկտորատի (խնամակալության) ներքո, որի հետ, բնականաբար, նա չի ունեցել և չէր կարող ունենալ որևէ առնչություն, բացի այն, որ բնակչության մի մասը, ինչպես Այսրկովկասի ու Մերձավոր Արևելքի մի շարք այլ տարածաշրջաններում թյուրքախոս էր:

Գրախոսվող ժողովածուի մեջ ներկայացված են ինչպես Երևանի պետական համալսարանում տեղի ունեցած գիտաժողովում (1999 թ. մարտի 16) ընթերցված զեկուցումները (էջ 7-85), այնպես էլ հարցին առնչվող մեծաթիվ փաստաթղթեր ու նյութեր, որոնք զետեղվել են որպես հավելված (էջ 87-201, կազմող՝ Ռ. Համբարձումյան): Ժողովածուի հետազոտական բաժինը բացվում է ակադ. Հ. Սիմոնյանի «Նախիջևանի հարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» հոդվածով, որտեղ ուղղակի ընդգծվում է, թե «Հայաստանի արդի ժամանակաշրջանի դժվարությունները հայտնի չափով պայմանավորված են այն իրադարձություններով ու դեպքերով, որոնք տեղի են ունեցել 1920-1921 թթ.»: Հանգամանորեն ներկայացնելով պայմանագրի կնքմանն առնչվող նոր մոտեցումներ, ակադ. Հ. Սիմոնյանն արձանագրում է, թե խնդրո առարկա պայմանագրում «Նախիջևանի մարզ» անվանումով տարածքը «արդեն համարվում էր ոչ թե Հայաստանին, այլ Ռուսաստանին ենթակա տարածք, որի խնամակալությունը հանձնվում էր Ադրբեջանին», և շեշտում հատկապես, թե «խոսքը վերաբերում էր խնամակալությանը, այլ ոչ թե ենթակայությանը»: Կարևոր է այն դիտարկումը, թե «ստանալով, անշուշտ, Մոսկվայի համաձայնությունը, Բաքուն առաջինը խախտեց մարտի 16-ի պայմանագիրը: Ադրբեջանի կենտգործկոմի որոշմամբ 1924 թ. փետրվարի 9-ին Նախիջևանի մարզը հայտարարվեց ավտոնոմ հանրապետություն և մտցվեց Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ, որպես նրա անբաժան տարածք»: Ուստի միանգամայն իրավացի է ակադ. Հ. Սիմոնյանը, երբ որպես եզրակացություն գտնում է, թե «Մոսկվայի և Կարսի պայմանագրերը սպասում են իրենց իրավական գնահատականին, մանավանդ եթե հաշվի առնենք, որ դրանք հակասում են նաև միջազգային հարաբերությունների հիմքում ընկած ժամանակակից փաստաթղթերի սկզբունքներին ու նորմերին (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի դեկլարացիա, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդված և այլն)» (էջ 15) և ինչպես անարդարացի բոլոր պայմանագրերը, անկախ այն բանից, թե երբ են դրանք կնքվել, այն ևս անօրինական է ու ենթակա վերանայման:

Ժողովածուի մեջ ուշադրավ է պրոֆ. Է. Զոհրաբյանի «Նախիջևանը 1918-1920 թթ. հայ-պարսկական հարաբերություններում» հոդվածը (էջ 16–32), ուր արխիվային նորահայտ ու անտիպ վավերագրերի լայն ընդգրկումով նոր դիտանկյունից են քննարկվում Նախիջևանի նկատմամբ նշված թվականներին դրսևորված հավակնությունների դիվանագիտական ծալքերը և վեր հանվում դիվանագիտական ու քաղաքական պայքարի այն մեթոդներն ու հնարները, որոնք գործի էին դրվել նշված թվականներին ինչպես պարսից, այնպես էլ Բաքվի իշխանությունների կողմից Նախիջևանին տիրելու նպատակով: Հետաքրքիր է, որ հոդվածում ներկայացված ադրբեջանական ապակողմնորոշիչ կեղծիքի ու սուտ լուրերի տարփողման միջոցներով գործելակերպի մի մասի ուղղակի կրկնությանը ականատես ենք լինում նաև մեր օրերում ևս:

Ակադ. Վ. Խոջաբեկյանը իր ուսումնասիրության խնդիրը վերնագրելով «Նախիջևանի հայության ոդիսականը» (էջ 33–46), ներկայացնում է Նախիջևանի երկրամասի դեմոգրաֆիական պատկերը XIX–XX դդ., որի շուրջ նա աշխատել է տարիներ ի վեր[3]: Անհերքելի փաստերով ցույց է տրվում

---

3 В. Ходжабекян, Б. Асатрян. Из истории армянского населения Нахичевана. — «Լրարեր Հա-

այն հայահալած քաղաքականությունը, որ վարվել է Նախիջևանում հատկապես խորհրդային իշխանության տարիներին և մասնավորապես 1920-ական թթ., որի հետևանքով հայերի թիվը նվազեցվեց մինչև իսպառ հայաթափումը: 1926 թ. մարդահամարի տվյալներով Նախիջևանի հայ բնակչության թիվը մնացել է 11,3 հազ., որը Վ. Խոջաբեկյանի հաշվումով, կազմել է, «ողջ բնակչության 10.8 %, այսինքն նախահեղափոխական շրջանի համեմատությամբ կրճատվել էր գրեթե 5 անգամ» (էջ 42):

Ա. Ավագյանի «Թուրքիայի որպես մահմեդականների հովանավորի, դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում» հոդվածում (էջ 47–56) ցուցադրված են այն ջանքերը, որ Թուրքիան թափում էր Հայաստանի տարածքային բգկտման ուղղությամբ: Հանդես գալով մահմեդականների հովանավորի քողի տակ, Թուրքիան, դիվանագիտական պայքարում օգտագործելով նաև այդ լծակը, հասավ այն բանին, որ նրա պահանջով Նախիջևանը անջատվեց Հայաստանի Հանրապետությունից և դրվեց Ադրբեջանի հովանավորության ներքո:

Հ. Կարագյոզյանի «Նախիջևանի տարածքը Ուրարտական աղբյուրներում» (էջ 57–70) հոդվածում վերլուծության է ենթարկված Օձասար լեռան լանջին Վ. Ա. Իգումնովի կողմից 1988 թ. հայտնաբերված Իշպուինեի (825–810) որդի Մինուայի (810–788) սեպագիր արձանագրությունը և տեղանունների քննությամբ հիմնավորված, թե «Նախիջևանի տարածքում հնդեվրոպական-հայկական սեպագիր տեղանունների առատությունը վկայում է, թե այն հնդեվրոպաբնակ և հայաբնակ մի տարածաշրջան» էր արդեն իսկ Մենուայի արշավանքի ժամանակ (էջ 68):

Ուշագրավ է պրոֆ. Բ. Հարությունյանի «Երկու ճշդրտում» հոդվածը (էջ 71–85), որտեղ համեմատության մեջ քննված են 1918 թ. հունիսի 4-ի Բաթումում, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում և 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագրերում Հայաստանի Նախիջևանյան հատվածի սահմանները: Ըստ Բ. Հարությունյանի եզրակացության, առաջին «Երկու պայմանագրերի տվյալների քարտեզագրումը հստակ ցույց է տալիս, որ տարածքային առումով ընդհանրության եզրեր տեսնելը Բաթումի և Ալեքսանդրապոլի պայմանագրերի միջև պարզապես հնարավոր չէ: Սակայն զարմանալիորեն մեծ նմանություն կա Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի և Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրերի միջև» (էջ 76–77): Ավելին, Մոսկվայի պայմանագրով, ի տարբերություն նախորդի, «շուրջ 250 քառակուսի կիլոմետր տարածք, որ պետք է մնար Հայաստանի Հանրապետությանը, անցել է Թուրքիային» (էջ 78): Ավելին, պրոֆ. Բ. Հարությունյանի լուսաբանմամբ, քանի որ թուրքական Ազգային ուխտով 1878 թ. Ռուսաստանին միացված Բաթումի և Կարսի մարզերը դիտվում էին Թուրքիայի տարածք, հետևաբար Ռուսաստանը, ճանաչելով Ազգային ուխտը, փաստորեն ստիպված էր ճանաչել Թուրքիայի իրավունքը Բաթումի նկատմամբ: Ըստ այդմ էլ Ռուսաստանը կարող էր ձեռք գցել Բաթումը՝ հարակից տարածքներով, միայն փոխհատուցման դեպքում, որը կատարվեց Հայաստանի հաշվին, զիջելով Երևանի նահանգի Սուրմալուի գավառը Թուրքիային: Ըստ Բ. Հարությունյանի եզրակացության, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով «նախատեսվող հայ-թուրքական սահմանագծի փաստական նույնությունը մտածել է տալիս, որ Քեմալական Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը պարտադրում էր նոր սահմանագիծ՝ Խորհրդային Ռուսաստանի հետ այն լիովին համաձայնեցնելուց հետո» (էջ 81)[4]:

սարակական գիտություններ», 1988, №6, էջ 18-27:

4 Ուշագրավ է, որ վերջերս (2001 թ. նոյեմբեր) նույն պայմանագրին անդրադարձել է նաև Միխեիլ Սվանիձեն և թուրքվրացական սահմանի ու 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագրի մասին իր զեկուցման հրապարակված թեզերում ներկայացնում է հետևյալ շարադրանքը. 1921 թ. փետրվարի 11-ին Խորհրդային Ռուսաստանը խախտելով Վրաստանի հետ պայմանագիրը, Կարմիր բանակի զորամասերը մտցրեց Վրաստան խորհրդայնացման նպատակով: Թուրքիայի դեսպան Քեազիմ բեյը հայտնեց Ժորդանիային, որ Թուրքիան պատրաստ է օգնություն ցուցաբերել Վրաստանին Ռուսաստանի դեմ պատերազմում և այդ պատրվակով թուրքական զորքերը փետրվարի 23-ին գրավեցին Արգահանը և Արդվինը, իսկ մարտի 4-11-ը՝ Ախալցխայի, Ախալքալաքի շրջաններն ու Բաթումի մարզը: Մոսկվայում փետրվարի 21-ին սկսված ռուս-թուրքական բանակցություններում Ռուսաստանի պատվիրակությունը պահանջում էր ռուս-թուրքական սահմանը որոշել ըստ 1920 թ. մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի,

Ժամանակագրական առումով զարմանալիորեն զուգադիպեցին կամ համընկան ռուս-թուրքական բանակցությունները Մոսկվայում (1921 թ. փետրվարի 26–մարտի 16), խորհրդային իշխանության «տապալումը» Հայաստանում (1921 թ. փետրվարի 18-մարտի վերջ) և խորհրդային իշխանության հաստատումը Վրաստանում (1921 թ. փետրվարի 25): Ստեղծվեց մի իրավիճակ, երբ Թուրքիայի հետ բանակցությունների ժամանակ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում էր Ադրբեջանի և Վրաստանի որպես «խորհրդային» կողմի շահերը, իսկ ոչ «խորհրդային» Հայաստանը չստացավ Ռուսաստանի, ուրեմն և Թուրքիայի աջակցությունը ու մնաց միայնակ. Հայաստանի բզկտումը արդարացնելու համար հասարակական կարծիք ձևավորելու նպատակով 1921 թ. մարտի 4-ին «Ժիզն նացիոնալնոստեյ» պարբերականում տպագրվեց հակահայկական մի հոդված Սկաչկո ստորագրությամբ հիմնավորելու Հայաստանի կատարելիք զոհողությունների «անհրաժեշտությունը»: Արդյունքում ուղիղ 3.5 ամիս առաջ (1920 թ. նոյ. 30) խորհրդային իշխանության հռչակման առիթով Հայաստանի անբաժան մաս հայտարարված Նախիջևանը 1921 թ. մարտի 16-ին փաստորեն խլվեց Հայաստանից և փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանին: Ղարաբաղի հարցը թեև պայմանագրում նշված չէր, սակայն այդ գործարքով փաստորեն կրկին հարցականի տակ դրվեց նաև Ղարաբաղի պատկանելության հարցը: Հայաստանի կառավարությունը հրաժարվեց ճանաչել այդ գործարքը և շուտով հանդես եկավ դրա դեմ: Ալ. Մյասնիկյանը Կավբյուրոյից պահանջեց հատուկ որոշումով ամրագրել Ղարաբաղը Հայաստանի կազմում, իսկ հունիսի 12-ին հրամանագիր ստորագրեց, որով Ղարաբաղը կրկին հայտարարվեց Հայաստանի անբաժան մասը: Հայաստանի կառավարության այդ ջանքերը ևս կասեցվեցին Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի նիստում: Նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում Խորհրդային Հայաստանի պատվիրակը, ստիպված էր վավերացնել պարտադրված պայմանները իր ստորագրությունով[5]:

Ցանկալի էր, անշուշտ, ժողովածուի մեջ ներկայացված տեսնել նաև նույն օրերին (1921 թ. փետր.-մարտ) Լոնդոնում ընթացող բանակցությունները լուսաբանող մի հրապարակում, քանզի այնտեղ ևս ներկայացվել էին հայ-թուրքական հարաբերությունների հարցերը:

---

*այսինքն՝ Ռուսաստանին պիտի անցնեին Ախալցխայի, Ախալքալաքի շրջաններն ու Բաթումի մարզը, իսկ Թուրքիան պահանջում էր վերականգնել 1918 թ. հունիսի 4-ին թուրք-վրացական պայմանագրով որոշված սահմանները, այն է՝ նշված տարածքները թողնել Թուրքիային: Խնդիրը լուծվեց Վրաստանում կարմիր բանակի միջոցով խորհրդային իշխանության հաստատմամբ և Վրաստանից թուրքական բանակի վտարմամբ, որով և Ախալցխան, Ախալքալաքն ու Բաթումը մնացին Վրաստանին, իսկ Թուրքիային միացվեցին Կարսը, Արդահանն ու Արդվինը (*Թոեզոլ Սցանոիժ, საქართველო-თურქეთ-რუსეთის ურთიერთობა 1921 წლის თებერვალ-მარტში,- «Սաքարթվելոյ մեցն. აკადემიის წევრ-კორ. პროფ. ვალერიან გაბაშვილის დაბადების 90 წლისთავისადმი მიძღვნილი სამეცნიერო კონფერენციის მასალები», თბ., 2001, გვ. 58):*

5 *Մոսկվայի և Կարսի պայմանագրերը շոշափում են նաև Վրաստանի և Ադրբեջանի շահերը, ապա ցանկալի էր ներկայացնել նաև նրանց վերաբերմունքի ու գնահատության դրսևորումները: Կարսի պայմանագրի միջազգային իրավական վերլուծությանը նվիրված հոդվածում Լ. Այեքսիձեն և Դ. Կոբախիձեն մասնավորապես նշում են, թե քանի որ Կարսի պայմանագիրը կանխորոշված էր Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով, ապա «ռուս-թուրքական նշված պայմանագիրը չի համապատասխանում միջազգային իրավունքի այն հիմնարար դրույթին, որը ձևավորվել է դեռևս հռոմեական իրավունքի կողմից. պայմանագիրը երրորդ կողմի համար չի ստեղծում ոչ իրավունքներ և ոչ պարտավորություններ /նշված դրույթը այդպես էլ հաստատագրված է «միջազգային պայմանագրերի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 34-րդ հոդվածում/»: Ուստի, ըստ հեղինակների, ռուս-թուրքական պայմանագիրը պետք է ճանաչվի ապօրինի, սակայն ինչ վերաբերում է այն փաստին, թե Կարսի պայմանագիրը ստորագրվել է Խորհրդային Վրաստանի իշխանությունների կողմից, ապա քանի որ ներկա իշխանությունները իրենց համարում են Վրաստանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդ, ուստի որպես գաղութային կեղեքումի և կախվածության վիճակից ազատադրված երկիր, նա կարող է ընդունել քաղաքական ու տնտեսական միայն այն պայմանագրերը, որոնք համապատասխանում են իր ազգային շահերին: Տե՛ս* ლევან ალექსიძე, დავით კობახიძე. ყარსის ხელშეკრულება /საერთაშორისო სამართლებრივი ანალიზი/,-"ქართული დიპლომატია"/წელიწდეული/, 1, თბ., 1994, გვ. 240-243:

Ժողովածուի «Հավելված»-ում ներկայացված են Գյուլիստանի (1813 թ. հոկտ. 12), Թուրքմենչայի (1828 թ. փետր. 10), Ալեքսանդրապոլի (1920 թ. գեկտ. 2), Մոսկվայի (1921 թ. մարտի 16), Կարսի (1921 թ. հոկտ. 13) պայմանագրերի՝ Նախիջևանին վերաբերող մասերը (էջ 88-92), իսկ «Այլ փաստաթղթեր և նյութեր» ու «Հրապարակումներ» խորագրերի ներքո (էջ 93-164) տպագրված են ինչպես Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ., այնպես էլ հետագա շրջանի Նախիջևանին ուղղակիորեն առնչվող կարևոր վավերագրեր: Ժողովածուն ամփոփվում է «Նախիջևանի հիմնահարցը արդի փուլում» բաժնով, ուր ներկայացված են Նախիջևանահայոց Ազգային խորհրդի գործունեության գրվագները: Ցանկալի էր, անշուշտ, նշված պայմանագրի մասին ունենալ նախկինում հրապարակված ուսումնասիրությունների մատենագիտական մի ցանկ, որն ավելի կհարստացներ ժողովածուն:

Այսպիսով, ներկա ժողովածուն, որ խմբագրել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, մեծապես ամբողջացնում է մեր պատկերացումները 1921 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրի իրական դրդապատճառների ու հետևանքների դրսևորումների մասին և կարևոր ներդրում է Հայաստանի պատմության նոր և նորագույն շրջանի ուսումնասիրության բնագավառում:

ՊԱՎԵԼ ՋՈԲԱՆՅԱՆ